© 2024. Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից:

© 2024. Նկարազարդումը՝ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ:

Հարցերի համար դիմել Մարիաննա Խաժակյանին,
էլ. հասցե՝ khazhakyan.marianna@peacedialogue.am:

Հեղինակ՝ Էդգար Վարդանյան

Նախագծի տնօրեն՝ Էդգար Խաչատրյան

Խմբագիր՝ Վահագն Անտոնյան

Աշխատանքային խումբ՝
Մարիաննա Խաժակյան
Անուշ Հարությունյան
Մարիա Գալստյան

Ուսումնասիրությունն իրականացվել է «Հաշտեցման Ռեսուրսներ» հկ-ի հետ սերտ համագործակցությամբ՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

Հրապարակման բովանդակության պատասխանատվությունը կրում է «Խաղաղության երկխոսություն» հկ-ն: Այն չի արտացոլում «Հաշտեցման Ռեսուրսներ» հկ-ի և Եվրոպական միության տեսակետները:

Վանաձոր, 2024

Հայաստանում տարածված խոսույթները մարդու հիմնարար պահանջմունքների մասին

Ամփոփիչ զեկույց

Հայաստանում տարածված խոսույթները մարդու հիմնարար պահանջմունքների մասին

Ամփոփիչ զեկույց

Հեղինակ՝
Էդգար Վարդանյան

Նախագծի տնօրեն՝
Էդգար Խաչատրյան

Խմբագիր՝
Վահագն Անտոնյան

Աշխատանքային խումբ՝
Մարիաննա Խաժակյան
Անուշ Հարությունյան
Մարիա Գալստյան

© 2024. Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից:

© 2024. Նկարազարդումը՝ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ:

Ծրագրի տնօրեն՝ Էդգար Խաչատրյան

Հարցերի համար դիմել Մարիաննա Խաժակյանին,
էլ. հասցե՝ khazhakyan.marianna@peacedialogue.am:

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 2002, ք. Վանաձոր;
Մյասնիկյան 12, բն. 40, «ԽԵ» գրասենյակ

Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632
Էլ. փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am; mailbox@peacedialogue.am
Կայք՝ http://www.peacedialogue.am; http://www.safesoldiers.am

Ուսումնասիրությունն իրականացվել է «Հաշտեցման Ռեսուրսներ» հկ-ի հետ սերտ համագործակցությամբ՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

Հրապարակման բովանդակության պատասխանատվությունը կրում է «Խաղաղության երկխոսություն» հկ-ն: Այն չի արտացոլում «Հաշտեցման Ռեսուրսներ» հկ-ի և Եվրոպական միության տեսակետները:

Վանաձոր, 2024

Բովանդակություն

Հետազոտության մասին - 5

Ընդհանրական ամփոփ դիտարկումներ - 7

Անվտանգության և խաղաղության վերաբերյալ պատկերացումները ֆոկուս խմբերի մասնակիցների շրջանում - 11

- Ինչ է անվտանգությունը - 11
- Անվտանգությունը Հայաստանում. անվտանգային միջավայրը և հիմնական սպառնալիքները - 12
- Ինչ է խաղաղությունը -16
- Հայաստանը և խաղաղությունը - 18
- Անվտանգությանը և խաղաղությանը հասնելու միջոցները - 19

Բարեկեցության վերաբերյալ պատկերացումները - 24

- Ինչ է բարեկեցությունը - 24
- Ինչ է պետք բարեկեցիկ կյանք ունենալու համար - 25
- Առանց խաղաղության, բայց բարեկեցիկ - 27

Ազատության վերաբերյալ պատկերացումները - 28

- Ինչ է ազատությունը - 28
- Ազատությունը Հայաստանում - 29

Ինքնության մասին պատկերացումները - 31

- Ինչ է ինքնությունը և ո՞ր ինքնությունն է կարևոր - 31
- Ո՞ր ինքնությունն է վտանգված - 33

Հայ-ադրբեջանական հարաբերությունները - 34

- Շարքային ադրբեջանցիների նկատմամբ վերաբերմունքը - 34
- Պատմական հիշողությունը ադրբեջանցիների նկատմամբ - 34
- Ինչպե՞ս լուծել կոնֆլիկտը - 36
- Խաղաղության պայմանագրի մասին - 36

Եզրակացություններ - 38

Առաջարկություններ - 42

Հետազոտության մասին

Սույն հետազոտությունը, մասնավորապես, կոչված է բացահայտելու Հայաստանի հասարակության շրջանում գոյություն ունեցող պատկերացումները այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են՝ անվտանգությունը (ներառյալ խաղաղությունը), ազատությունը, ինքնությունը, բարեկեցությունը: Հետազոտության տեսական հիմքն է մարդու հիմնարար պահանջմունքների տեսությունները, մասնավորապես՝ Յոհան Գալթունգի մարդու հիմնարար պահանջմունքների տիպաբանությունը:

Հետազոտության խնդիրներից մեկն էր պարզել՝ ի՞նչ նարատիվներ կան Հայաստանում վերոնշյալ հարցերի վերաբերյալ:

Առանձին խնդիր էր դրված պարզել, թե ի՞նչ սպասումներ կան հասարակությունում հայ-ադրբեջանական հարաբերությունների նորմալացման գործընթացից, և որո՞նք են հայ-ադրբեջանական հարաբերությունների վերաբերյալ տարածված նարատիվները:

Վերոնշյալ բոլոր նարատիվների վերհանումն, ընդհանուր առմամբ, հետապնդում էր երեք նպատակ:

Առաջին նպատակն է՝ պարզել.

- ինչպիսի՞ն են Հայաստանում հանրային տրամադրությունները, ընկալումները (perceptions) սեփական կյանքի որակի, հիմնարար պահանջմունքների բավարարման մակարդակի վերաբերյալ, և որո՞նք են մարդկանց հիմնական վախերը, կոնկրետ դժգոհությունները և ակնկալիքները, ցանկությունները այս բոլորի հարցերի վերաբերյալ:

Երկրորդ նպատակն էր, պարզել՝

- որո՞նք են այն նարատիվները, որոնք կարող են նպաստել հայ եւ ադրբեջանական հասարակությունների միջեւ երկխոսության ձեւավորմանն ու խաղաղության հաստատմանը կամ, ընդհակառակը, խոչընդոտել այդ ամենին:

Հետազոտության երրորդ նպատակն էր պարզել՝

- հիշատակված թեմաների վերաբերյալ ո՞ր նարատիվներն են դոմինանտ, որ նարատիվներն են համեմատաբար կոնսենսուսային, իսկ որո՞նք են հաճախ բանավեճ հարուցող:

Հետազոտության մեթոդ է ընտրվել ֆոկուս խմբային քննարկումները: Իրականացվել է 8 ֆոկուս խումբ 2023թ.-ի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

Յուրաքանչյուր ֆոկուս խումբ բաղկացած է եղել միջինը 6 մասնակցից:

Մասնակիցներն ընտրվել են ըստ տարիքային (առանձնացվել է երեք տարիքային խումբ) և կրթական (առանձնացվել է երկու խումբ՝ բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեցողների) չափանիշների: Ֆոկուս խմբերն իրականացվել են Հայաստանի ողջ տարածքում:

Ընդհանրական ամփոփ դիտարկումներ

Հետազոտությունը բացահայտում է, որ ֆոկուս խմբերի մասնակիցների շրջանում անվտանգությանը վերաբերող հիմնական դոմինանտ նարատիվներից մեկն այն է, որ Հայաստանի կարևորագույն չլուծված խնդիրը, Հայաստանի հիմնական մարտահրավերը պետության ֆիզիկական անվտանգության ապահովումն է:

Այդ նարատիվը հիմնավորվում է մի շարք փոխկապակցված ենթանարատիվներով՝ Հայաստանի կարևորագույն չլուծված խնդիրը, Հայաստանի հիմնական մարտահրավերը՝ իր ֆիզիկական անվտանգության ապահովումն է, քանի որ՝

- *Հայաստանը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղը, վերջին շրջանում ռազմական հարձակումների է ենթարկվել Ադրբեջանի կողմից, որի արդյունքում հայ ժողովուրդը մեծ մարդկային և տարածքային կորուստներ է ունեցել և աժմ խոցելի վիճակում է;*

- *Ադրբեջանը հարձակվել է հայերի վրա Ռուսաստանի աչքի առջև և վերջինս որևէ կերպ չի խանգարել Ադրբեջանին և, մյուս կողմից, չի օգնել Հայաստանին, այսպիսով չկատարելով իր դաշնակցային պարտականությունները, մինչդեռ Ադրբեջանը վայելել է Թուրքիայի և մի քանի այլ երկրների աջակցությունը: Եվ այս ամենն առկա է նաև այսօր. Ադրբեջանի թիկունքում Թուրքիան է, իսկ Հայաստանի պաշտոնական դաշնակիցը՝ Ռուսաստանը, որևէ կերպ չի սատարում Հայաստանին, ավելին, գործակցում է Ադրբեջանի և Թուրքիայի հետ;*

- *Ադրբեջանն իր դաշնակիցների հետ մեկտեղ տարածքային նկրտումներ ունի Հայաստանի նկատմամբ և շարունակում է մաքսիմալիստական ագրեսիվ քաղաքականություն վարել, իսկ Հայաստանի պաշտոնական դաշնակիցը շարունակում է փաստացի հակահայ քաղաքականություն վարել, մինչդեռ Հայաստանն իր թիկունքում դեռ չունի այնպիսի դաշնակիցներ, ինչպիսին, օրինակ, Թուրքիան է Ադրբեջանի համար: Այստեղից հետևություն, որ այսօր էլ Հայաստանի անվտանգությունը վտանգված է:*

Հարկ է նշել, որ վերլուծելով անվտանգության հարցի հետ կապված հարցվածների դատողությունները կարող ենք նաև նշել, որ նրանց գնահատմամբ պետության ֆիզիկական անվտանգության սպառնալիքները կարող են հանգեցնել ոչ միայն երկրի սուվերենության կորստին, այլև Հայաստանում ապրող ժողովրդի ուղղակի վերացմանը:

Այսինքն ֆոկուս խմբերի մասնակիցները մտավախություն ունեն, որ եթե չլուծվի անվտանգային խնդիրը, նրանց ֆիզիկական ոչնչացումը շատ հավանական է:

Հարցվածների շրջանում հայտնաբերված մեկ այլ լայն տարածում ունեցող նարատիվ էր այն, որ *անհրաժեշտ է փոխել արտաքին քաղաքական վեկտորը և խորքային հարաբերություններ հաստատել Արևմուտքի հետ, ինչը կարող է մեծապես նպաստել արտաքին վտանգը չեզոքացնելուն:* Մասնակիցների զգալի հատվածը, ի դեմ Արևմուտքի տեսնում էր ավելի անկողմնակալ, ավելի վստահելի, ավելի բարվոք, միջազգային ասպարեզում ավելի մեծ կարողություններ ունեցող սուբյեկտի:

Կարելի է ասել, որ կոնսենսուսային նարատիվ էր այն, որ անվտանգային խնդիրների խորացմանը նպաստում է Հայաստանի ներսում առկա ատելության մթնոլորտը, որի ձևավորմանը հատկապես նպաստում են ռուսաստանյան որոշ շրջանակներ: Մասնակիցները կողմ էին, որ պետությունը որոշակի կոշտ միջոցներ ձեռնարկի և սահմանափակի ատելության, վիրավորանքներով լի խոսքը և այլն: Ի դեպ, հիմնվելով ֆոկուս խմբերի ժամանակ հնչեցրած մի շարք կարծիքների վրա, կարող ենք նաև ենթադրել, որ շատ հաճախ, երբ որոշ մարդիկ մտածում են, որ ավտորիտար կառավարումը ավելի լավ է անդրադառնում երկրի անվտանգության վրա, նրանք ի նկատի ունեն, որ ավտորիտար կառավարումը, օրինակ, թույլ չի տալիս, որ մարդիկ ատելություն քարոզող հռետորաբանություն և վարք դրսևորեն և, ըստ իրենց, արդյունքում ավելի ամուր, միասնական, կարգապահ հասարակություն է ձևավորվում, որը կարողանում է ավելի արդյունավետ դիմագրավել անվտանգային մարտահրավերներին: Հարկ է նշել, որ այդպիսի մոտեցումը թեև տարածված էր, սակայն մեր գնահատմամբ այն դոմինանտ չէր:

Պետք է նկատել, որ քննարկումներում առանձին նշվել է նաև անվտանգության տեղեկատվական, հոգևոր բաղադրիչների մասին: Որպես անվտանգության բաղկացուցիչ է դիտարկվել նաև էկոլոգիան և առողջ շրջակա միջավայրը, թեև այդ բոլորը ստորադասվել է պետության ֆիզիկական անվտանգությանը:

Մեկ այլ լայն տարածում ունեցող նարատիվ էր, որ թեև երկրի անվտանգությունը մեծապես հարվածի տակ է, սակայն երկրի ներսում բավականին անվտանգ է: Այս թեզը հիմնավորվում էր նրանով, որ մարդիկ վտանգ չեն զգում իրենց առօրյա կյանքում և, օրինակ, հանգիստ են լինում, երբ իրենց երեխաները ուշ երեկոյան դրսում խաղում են: Ըստ էության, սա շատ հետաքրքիր ֆենոմեն է, քանզի մարդիկ, որոնք գտնում են, որ շատ հավանական է, որ եթե պետության անվտանգության խնդիրը չլուծվի իրենք կարող են ֆիզիկապես ոչնչանալ, միևնույն ժամանակ համարում են, որ տվյալ պահին անվտանգ միջավայրում են ապրում: Սրա հիման վրա կարելի է ենթադրել, որ ապագայում, եթե չլինեն ռազմական գործողություններ, և եթե շատերի մոտ ձևավորվի այն ընկալումը, որ արտաքին վտանգը առնվազն չեզոքացված է, ապա, հաշվի առնելով շատերի բավարարվածությունը ներքին

անվտանգային միջավայրից, դա էլ ավելի կարող է բարձրացնել սեփական կյանքից գոհ լինելու մակարդակը:

Հարկ է նշել, որ գերիշխող նարատիվ էր նաև այն, որ խաղաղությունը խիստ անհրաժեշտ է, որ դրան հասնելու համար հնարավոր են կոմպրոմիսներ, սակայն Հայաստանի տարածքային ամբողջականությունը որևէ կերպ չպետք է խաթարվի դրա արդյունքում:

Նկատվել է, որ հետազոտվողների շրջանում հայ-ադրբեջանական խաղաղության պոտենցիալ պայմանագրի վերաբերյալ առկա են տարբեր մոտեցումներ և շատ դժվար է ասել, թե հատկապես որ մոտեցումներն են գերիշխող: Տարածված նարատիվներից էր այն, որ այսպես ապրել չի կարելի և անհրաժեշտ է, վերջ ի վերջո, հասնել խաղաղության:

Սակայն, նույնպես տարածված նարատիվներից էր այն, որ չի լինելու ոչ մի խաղաղության պայմանագիր, իսկ եթե լինի էլ՝ չի աշխատելու:

Կարևոր ենք համարում նշել, որ դոմինանտ նարատիվներից էր նաև այն, որ շարքային ադրբեջանցիները նույնպես Ալիևի վարչակարգի զոհերն են: Սակայն նույն կերպ տարածված նարատիվ էր, որ շարքային ադրբեջանցիները նույնպես տարածում են ատելության խոսք հայերի նկատմամբ, որ չեն ընդդիմանում Ալիևի ռեժիմի հակահայկական քայլերին: Հարկ է նշել, որ շատերն իրենց կարծիքը հիմնավորում էին անձնական դիտարկումներով:

Հատկանշական է, որ թեեւ ֆոկուս խմբի մասնակիցների զգալի մասն առաջնային է համարել էթնիկական ինքնությունը և համարել, որ հենց էթնիկական ինքնությունն է առաջին հերթին վտանգված, հիմնականում մարդիկ խոսել են Հայաստանի հանրապետության պաշտպանության, պետությանը սպառնացող վտանգների չեզոքացման անհրաժեշտության մասին: Եվ դա այն պարագայում, երբ հարցվողների զգալի հատվածը չի հիշատակել հայաստանյան ինքնության մասին և միայն որոշակի հարցադրումներից հետո է նշել, որ առկա է նաև այդպիսին:

Ի դեպ, հատուկ ուշադրության է արժանի այն, որ հարցվածների մեծ մասը չի համարում, որ բացի էթնիկ, հայաստանյան և կրոնական ինքնություններից իրենց որևէ այլ ինքնություն վտանգի տակ է Հայաստանում: Առկա վտանգն էլ նույնպես հիմնականում պայմանավորվել է Ադրբեջանից եկող սպառնալիքներով: Որպես կանոն, բացի վերոնշյալ ինքնություններից մարդիկ նշում էին, որ կարևորում են իրենց համամարդկային և ընտանեկան ինքնությունը:

Ընդհանուր առմամբ, հարցվածների մեծ մասը համարում է, որ Հայաստանում ազատ միջավայր է: Որոշները նշել են, որ Հայաստանի որոշակի հատվածներում կան ազատության սահմանափակումներ՝ պայմանավորված հայ-ադրբեջանական կոնֆլիկտով, երբ, օրինակ, մարդիկ չեն կարողանում

ազատ տեղաշարժվել, կամ գյուղացիական աշխատանքներով զբաղվել, քանի որ կրակահերթի տակ ընկնելու վտանգ կա:

Բանավեճ է հարուցել մասնակիցներից մի քանիսի կողմից առաջ քաշված այն նարատիվը, որ խաղաղության հասնելու համար նոր պատերազմ է պետք: Այս թեզի կողմնակիցները պնդում էին, որ Ադրբեջանը երբեք կանգ չի առնի, ինչը երևում է նրա ագրեսիվ հռետորաբանությունից և մեր պատմությունից, ուստի պետք է մտածել պատերազմում հաղթելու մասին, ինչը որոշակիորեն կզսպի վերջինիս ախորժակը: Կարող ենք ենթադրել, որ այսպիսի նարատիվ առաջ քաշողների մոտեցումները կարող են առնվազն որոշակիորեն փոխվել, եթե փոփոխություն արձանագրվի Բաքվի հռետորաբանությունում, եթե միջազգային հանրության կողմից էլ շոշափելի անվտանգային երաշխիքներ, մեխանիզմներ ներկայացվեն:

Անվտանգության, խաղաղության, բարեկեցության հասնելու միջոցների ցանկում մասնակիցներն ընդգրկել են՝

- հզոր բանակ կառուցելը,
- արդյունավետ, նախաձեռնողական դիվանագիտություն վարելը,
- մարդկանց կրթելը, որպեսզի բոլոր ոլորտներում լինեն բարձր մակարդակի պրոֆեսիոնալներ,
- հայաստանակենտրոն լինելը,
- ապատեղեկատվության դեմ պայքարելը,
- ազգային միասնականություն դրսևորելը,
- արտաքին քաղաքական վեկտորը փոխելը,
- ճիշտ դաշնակիցներ ընտրելն ու ունենալը:

Անվտանգության և խաղաղության վերաբերյալ պատկերացումները ֆոկուս խմբերի մասնակիցների շրջանում

Ինչ է անվտանգությունը

Ֆոկուս խմբերի մասնակիցներից շատերը նշել են, որ անվտանգությունն արտաքին վտանգներից պաշտպանված լինելն է: Հնչել է նաև տեսակետ, որ անվտանգ միջավայրը արտաքին վտանգից պատշաճ հեռավորության վրա գտնվող միջավայրն է:

> *«Եթե թշնամին հեռու է և չի կարող ներխուժել Հայաստանի տարածք, ուրեմն անվտանգ միջավայր է, եթե ոչ, եթե կարող է ներխուժել, ուրեմն վտանգավոր միջավայր է, անվտանգությունը խաթարված է»:*

Շատերը նշել են նաև, որ մարդիկ կարող են ապրել այնպիսի միջավայրում, որտեղ նրանց ֆիզիկական գոյությանը չեն սպառնում, ֆիզիկապես չեն վնասում, բայց անվտանգ չզգան իրենց, որովհետև ստիպված են ապրել այնպես, ինչպես իրենք չեն ցանկանում ապրել: Նման տեսակետ հայտնողները, կարելի է ասել, կապ էին տեսնում անվտանգության և ազատության միջև:

Սակայն այս մոտեցումը հակադարձելու առիթ է հանդիսացել մի այլ մասնակիցների համար:

> *«Անվտանգ չէ Հայաստանից տեղափոխվել Արցախ, երբ գիտես, որ կարող են քեզ սպանել օրինակ»:*

Որպես անվտանգության կարևորագույն բաղկացուցիչներ են նշվել նաև՝
- օրենքի գերակայությունը,
- տնտեսական բարեկեցությունը,
- մարդու իրավունքների պաշտպանվածությունը:

Ի դեպ, հետաքրքիր հանգամանք է այն, որ ռեսպոնդենտներից շատերը նշել են, որ անվտանգություն բառն իրենց մոտ վատ զգացողություն, խուճապ և

վախ է առաջացնում: Շատերը նշել են, որ իրենց մոտ կա վախ, որ իրենք մի օր կարող են հայտնվել արցախցիները վիճակում:

«Կարևորը երկրի սահմանները ամուր լինեն, մենք մեզ պաշտպանված զգանք արտաքին թափանցումներից». Ֆոկուս խմբերի մասնակիցներից մեկի այս խոսքերը կարող են դիտարկվել որպես անվտանգության վերաբերյալ ֆոկուս խմբերի մասնակիցների ընդհանրական մոտեցումն արտահայտող նարատիվ: Կարելի է նշել, որ մասնակիցների զգալի մասը բոլոր խնդիրները ստորադասել է պետական սահմանների անառիկությանը. ըստ շատերի՝ պետության ֆիզիկական պաշտպանությունն այն կարեւորագույն հարցն է, որի լուծումը նորմալ, բնականոն կյանք ունենալու համար գերկարևոր, թեեւ ոչ բավավար պայմաններից է: Ըստ էության, ռեսպոնդենտները համարում են, որ լիարժեք կյանք հնարավոր չէ ունենալ այն պարագայում, երբ պետության սահմաններն անառիկ չեն, երբ թեկուզ ոչ հաճախ ռազմական գործողություններ են տեղի ունենում սահմանների երկայնքում:

Անվտանգության մասին մասնակիցների դատողություններից պարզ է դառնում նաև, որ անվտանգության զգացողություն ունենալու համար մարդկանց համար հարկավոր է, որ գտնվեն իրենց վստահություն ներշնչող մարդկանց միջավայրում:

Շատերը նշել են, որ անվտանգ կյանք ունենալու համար անհրաժեշտ է, որ հարաբերական կայունություն լինի եւ հնարավոր լինի քիչ թե շատ պլանավորել սեփական կյանքը. *«Սրաբիլ երկիր, հա, որ ասենք հանգիստ լինես, որ էգուց, մյուս օր մի բան չի լինի»*:

Հարկ է նշել, որ գրեթե բոլորը պնդել են, որ բացարձակ անվտանգություն գոյություն չունի, և խոսում են միայն հարաբերական անվտանգության մասին:

Անվտանգությունը Հայաստանում. անվտանգային միջավայրը և հիմնական սպառնալիքները

Ըստ ֆոկուս խմբի մասնակիցների՝ Հայաստանի հանրապետության ֆիզիկական անվտանգությունը վտանգված է:

> *«Եթե անկեղծ, ինձ մոտ անվտանգություն բառն առաջինն ասոցացվում ա հենց երկրի անվտանգության հետ, ոչ թե իմ սեփական անվտանգության հետ: Ես չգիտեմ, երևի դա միջավայրից ա կախված, որտեղ մենք ապրում ենք: Իմ համար էդ բավականին հուզիչ, ծանր թեմա ա, որովհետև Ղարաբաղը կորցնելուց հետո արդեն Հայաստանի անվտանգության խնդիրն ունենք»:*

Հարկ է նշել, որ թեև կար կոնսենսուս այն հարցի վերաբերյալ, որ պետության ֆիզիկական անվտանգությունը անվտանգության ամենակարևոր մասն է և համար մեկ չլուծված խնդիրն է, սակայն հնչած տեսակետներից կարող ենք եզրակացնել, որ շատերն են իրենց անվտանգ զգում Հայաստանի ներսում: Ընդհանրապես շատ կարևոր և հետաքրքիր բացահայտում կարելի է անվանել այն, որ ռեսպոնդենտների զգալի մասը Հայաստանի ներսում առկա միջավայրը համարում է անվտանգ միջավայր: Շատերը նաև նշում էին, որ իրենք Հայաստանում ավելի անվտանգ են իրենց զգում, քան նույնիսկ մի շարք զարգացած եվրոպական երկրներում, որոնցում եղել են:

«Մեր մոտ էդ անվտանգության խնդիրը շատ լավ է: Գուցե դա մեր ազգային մենթալիտետի չգիտեմ ինչը, բայց ես համոզված եմ, որ մեր քաղաքում ոչ մի ծնող չի վախենում իրա երեխային մենակ դպրոց թողնի, որ գնա կամ գա... Իսկ եվրոպական և ռուսաստանյան քաղաքներում ծնողները երեխաներին ուղեկցում են: Ինչից են վախենում, որեմն վտանգ կա: Մեզ մոտ էդ վտանգը չկա»:

«Ես հանգիստ եմ, որ իմ երեխաները դուրս են գալու ու ժամը 10-ին, 11-ին կարող են տուն գալ»:

«Մեր Երևանն ավելի ապահով է, որովհետև շատերը գալիս են էստեղ և գիշերը կարողանում են հանգիստ դուրս գալ զբոսնելու, իրենց կյանքին վտանգ չի սպառնում»:

«Ես էստեղ՝ Հայաստանում, կոնկրետ չեմ մտածում իմ ֆիզիկական անվտանգության մասին, որովհետև գիտեմ, եթե ժամը 7-ին, օրինակ, դուրս գամ զբոսանքի, ինձ ոչ մի բան չի սպառնա: Մեր պետությունը հիմա ունի էդ պայմանները, բայց մենք դրսում վախենում էինք արդեն 7-ից հետո դուրս գալ: Պետք ա մի քանի հոգով իրար հետ լինեինք... Մեր երկիրը, ճիշտ ա, կարողա սահմաններին ինչ-որ խնդիր ունի, բայց մեր երկիրը էն երկրների շարքին ա դասվում, որտեղ մարդու ֆիզիկական անվտանգությունը բավականին բարձր մակարդակի վրա ա»:

«Ես անվտանգ եմ, որովհետև գիտեմ Հայաստանում հայ մարդը և Հայաստանում գտնվողները ինչպիսին են, ինչ վարքագիծ կարող են դրսևորել: Ես, օրինակ, Գերմանիայում եմ եղել: Փոքր քաղաքներում շատ ուրիշ զգացողություն եմ ունեցել, շատ հաճելի, նույնիսկ սովորելու բան ունենք մենք, բայց մեծ քաղաքում ես գազանություններ եմ տեսել, որովհետև

> *էնպես տարբեր ազգեր կան, ու դու չգիտես՝ ումից ինչ սպասես ու որ պահին: Այ էդ առումով, օրինակ, ես կարծում եմ, որ շատ կարևոր է, որ մենք հանգիստ ենք մեր հողի վրա, որովհետև գիտենք, թե մենք ինչպես ենք վերաբերվում այսինչ կամ այնինչ բանին»:*

Ըստ էության, հնչած պատասխաններից կարող ենք եզրակացնել. շատերի մոտեցումն է, որ այն վայրերում, որտեղ չկան ռազմական գործողություններ կամ չկա ուղղակի ռազմական վտանգ, իրենք իրենց անվտանգ են զգում: Այս գաղափարը լավագույնս արտահայտում է մասնակիցներից մեկի հետևյալ խոսքերը. *«Երևանն աշխարհի ամենաանվտանգ քաղաքներից մեկն ա, բայց երկրի մասշտաբով Հայաստանը ամենավտանգավոր երկրներից մեկն ա՝ պատերազմի առումով»:*

Հնչել է նաև տեսակետ, որ այդ ներքին անվտանգ միջավայրը հիմնականում մոնոէթնիկ լինելու արդյունք է. *«...Մենք 97%-ով միատար ենք՝ հայ ենք, վախ չունենք: Եվրոպական, ռուսական ցանկացած քաղաքում տարբեր ազգեր են, տարբեր կրոններ, ավելի բազմազան են: Իսկ մեր մոտ, քանի որ բոլորը մեծամասամբ հայ են, մեկը մեկին ճանաչում են, իրար լավ գիտեն»:*

Ի դեպ, ենթադրելի է, որ այս մոտեցումը կարող է ապագայում ծայրահեղ աջ դրսեւորումների, հակամիգրանտական մոտեցումների աղբյուր հանդիսանալ: Միգրանտների թվի շատացման պարագայում շատերը կարող են մտածել, որ այդ անվտանգ միջավայրը, որն, ըստ իրենց, ձեւավորվել է Հայաստանի մոնոէթնիկ երկիր լինելու շնորհիվ, կարող է վերանալ:

Հարկ է նշել, որ ֆոկուս խմբի մասնակիցներից շատերը Հայաստանում պետական ուժային մարմիններից վտանգ չեն զգում և դիտարկում են նրանց որպես անվտանգություն ապահովող սուբյեկտների: Մինչդեռ *«եթե որևէ ավտորիտար պետությունում ոստիկան տեսնեք, ինչ զգացողություն կունենաք»* հարցին պատասխանել են, որ կզգուշանան:

Մասնակիցներից շատերը պնդել են, որ եվրոպական քաղաքներում էլ անվտանգ չի: Որպես իրենց այդ տեսակետի հիմնավորում, օրինակ, նշել են, որ՝

- *«փեռոր ա լինում»,*
- *«գնացքներում հարբած մարդկանց կարող ես տեսնել, որոնք շատ վախենալու տեսք ունեն»,*
- *«գողությունների դեպքերն էնտեղ շատ շատ են»,*
- *«Գերմանիայում էի, ավտոմեքենան կանգնեցրեցին, ստիպեցին ձեռքերը դնենք մեր ծնկների վրա, ու երբ պատահականը ձեռքը շարժեցինք, ոստիկանը ձեռքը արդեն տարավ հետևը: Դա ինձ համար անապահով միջավայր է, որովհետև ինքը կարող է, անհասկանալի հանգամանքներից մղված, կրակել ինձ վրա»:*

Հետաքրքիր է նաև, որ ֆոկուս խմբերի մասնակիցներից որևէ մեկը հանցագործությունները, հանցավոր խմբերի գոյությունը չի դիտարկել որպես Հայաստանի անվտանգային միջավայրը խարխլող գործոն: Բացի պատերազմներից, մասնակիցներից շատերը համարել են, որ անվտանգությունը խաթարող երևույթներ են նաև բնական և տեխնոգեն աղետները, դժբախտ պատահարները: Անվտանգությունը, սակայն դիտարկվել է ոչ միայն ֆիզիկական հարթության վրա. խոսվել է նաեւ ինֆորմացիոն, թվային և հոգևոր անվտանգություն մասին: Օրինակ՝ նշվել է, որ տարբեր սոցիալական ցանցերի, մեդիայի միջոցով Հայաստանը հարձակման է ենթարկվում, ինչը նույնպես հավելյալ անվտանգային խնդիրներ է ստեղծում:

> *«Ռուսական ալիքներն ընդհանրապես ես աշխատում եմ չնայել, բայց մեկ-մեկ անցնում եմ ալիքներով ու տեսնում, թե ինչ է կատարվում, ինչ պրոպագանդա է գնում: Այսինքն, մենք նաև պաշտպանված չենք էդ տեսակի աղբերից»:*

Առանձին ուշադրության է արժանի այն, որ ֆոկուս խմբերի մասնակիցներից շատերի համար տեղեկատվական անվտանգության տեսանկյունից խնդիր է համարվել որոշակի կրոնական կազմակերպությունների գործունեությունը, որոնց ըստ էության կարող ենք դասել նեոբողոքականությանը: Մասնակիցներն այդ կազմակերպություններն աղանդավորական էին համարում:

Ռեսպոնդենտներն իրենց մոտեցումները հիմնավորում էին նրանով, որ այդ կրոնական կազմակերպությունները մանիպուլյատիվ տեխնոլոգիաներ են օգտագործում մարդկանց ներգրավելու համար: Նշվել է նաև, որ վերջիններս հակասոցիալական վարք են դրսեւորում. չեն ցանկանում ծառայել բանակում, չեն ընդունում պետական իշխանություն եւ այլն:

> *«Գործի բերումով շրջում եմ գյուղերում և գիտեմ, որ հոգեորսությունը մեծ տարածում ունի... Շատ արատավոր մի երևույթ է, որ աղանդները կարող են ազատորեն ծավալել իրենց գործունեությունը»:*

Հարկ է նկատել, որ նման տեսակետ ունեցողներն այլ դավանանքների նկատմամբ անհանդուրժող կարծիք չեն արտահայտել: Տպավորություն էր, որ խնդիր էին համարում միայն նեոբողոքականության տարածումը:

Սակայն պետք է նաև նշել, որ կրոնական տարբեր խմբերի գործունեության հետ կապված թեման, որոնք բաձրացնում էին ֆոկուս խմբերի մասնակիցների մի մասը, շատ հաճախ բանավեճի և հակադարձելու առարկա է հանդիսացել: Մասնակիցներից շատերը համաձայն չէին վերոնշյալ քննադատական գնահատականների հետ:

Ռեսպոնդենտները Հայաստանի անվտանգության սպառնալիքների շարքում

նշել են Ադրբեջանը, Թուրքիան: Շատերն այդ երկների հետ մեկտեղ հիշատակել են նաև Ռուսաստանը:

Մասնակիցներից մեկը որպես ՀՀ անվտանգության սպառնալիք է դիտարկել նաև ՀՀ կառավարությունը՝ *«...պետությունը մեր անվտանգությանը մատների արանքով է նայում, սա արդեն իսկ սպառնալիք է»*:

Տարածված մոտեցում է եղել, որ անվտանգային միջավայրը խարխլված է նաև այն պատճառով, որ ՀՀ-ի դաշնակիցն այնպիսի քաղաքականություն է վարել, որը կարելի է դավաճանական համարել: Նշվել է նաև, որ այդպիսի վարքը բնորոշ է Ռուսաստանին. *«Իսկ Ռուսաստանը 13թ.-ից ցայսօր էլ մեզ դավաճանել է իր շահերի համար»*: Հնչել է նաև տեսակետ, որ Ռուսաստանը ոչ միայն չի պաշտպանում Հայաստանին, այլև վնասում է:

Մասնակիցները շատերը որպես ՀՀ անվտանգության սպառնալիք են նշել նաև երեխաների շրջանում թմրանյութերի տարածումը:

> *«Այդ առումով ես շատ անհանգիստ եմ ու վտանգ եմ զգում, դպրոցի պատերին թելեգրամի էդ հասցեներն են, ու ես չեմ տեսել, որ կոնկրետ ոստիկանությունը չէ՞ պիտի դրանով զբաղվի, իմ տղան է մաքրում էդ բոլոր թելեգրամի հասցեները, վերցնում է, ներկում է»:*

Ի՞նչ է խաղաղությունը

Մասնակիցներից շատերը խաղաղությունը սահմանել են գրեթե նույն կերպ, ինչպես սահմանել են անվտանգությունը:

> *«Սահմանին խաղաղություն, ամենակարևորը, կրակոց չլինի»:*

> *«Կլինի խաղաղություն այն դեպքում, երբ պետությունը կերաշխավորի սահմանային անվտանգությունը, ներքին քաղաքացիական պատերազմներ չստեղծի, ստեղծի սոցիալական հավասար պայմաններ, աշխատանքային պայմաններ, քանի որ երբ մարդը բարեկեցիկ է ապրում, ինքը ունի աշխատանք, չի կարա դառնա հանցագործ»:*

Շատերը նշել են, որ խաղաղությունը ֆիզիկական և հոգեկան անվտանգության հետ կապված բան է, որ այն մեծագույն արժեք է, քանի որ թույլ է տալիս ազատ ապրել, մտածել, ապահով լինել, ապագա տեսնել, տնտեսություն զարգացնել:

Խաղաղության վերաբերյալ պատկերացումները նման են անվտանգության

վերաբերյալ պատկերացումներին նաև այն առումով, որ մասնակիցները կապել են այն ուժեղ բանակի առկայության հետ: Ենթադրվել է, որ վերջինս թույլ չի տա, որպեսզի հարձակում լինի պետության վրա: Սակայն նաև կարևորվել է հաշտության կարևորությունը, այլ երկրների հետ նորմալ, ոչ պատերազմական հարաբերություններ հաստատելը:

> *«Խաղաղությունը էդ պետությունների միջև հաշտությունն է՝ առանց կորուստների, առանց մարդկային զոհերի»:*

Շատերի կողմից նշվել է, որ խաղաղությունը դա այնպիսի իրավիճակ է, որտեղ կա ապահով միջավայր: Տարածված տեսակետ էր, որ խաղաղությունը ռազմական գործողությունների բացակայությունն է:

> *«Երբ ամեն օր մեր զինվորներից ինչ որ մեկը չմահանա, որ ծնողները հանգիստ լինեն, որ իրենց երեխան ապահով է»:*

Խաղաղությունը շատերի մոտ ասոցացվել է հանգիստ և կայուն վիճակի հետ: Ի դեպ, կարելի է եզրակացնել նաև, որ խաղաղությունը դիտարկվում է նաև որպես սուբյեկտիվ ընկալում, որպես հոգեբանական վիճակ. *«Ամեն ինչ սիրուն պուպուշ դրած ա, ինձ խանգարող չկա, հեռուստացույց չեմ միացնում, աշխատում եմ՝ լուրեր չնայեմ»:*

> *«Իմ անձնական տունն ա, որտեղ ինձ կատարյալ ռելաքսի, կատարյալ հանգստի մեջ եմ լինում, ինչ էլ որ լինի»:*

> *«Խաղաղություն ասվածն ինձ համար՝ երբ ես կկարողանամ հանգիստ իրականացնել իմ ծրագրերը, հոգ տանել իմ ընտանիքի մասին, իմ սիրելի մարդկանց մասին»:*

Հնչել է նաև տեսակետ, որ խաղաղության զգացողության վրա ազդում է նաև միջավայրի աղտոտվածությունը, քանի որ դա ազդում է առողջության վրա: Թեև սա եզակի տեսակետ է, սակայն պետք է նշել, որ մասնակիցները լուրջ աջակցություն են հայտնել դրան:

> *«Ես կարող է գնամ, որևէ ձորակի մեջ նստեմ, ես ինձ խաղաղ կզգամ էդտեղ, բայց երբ իմ կողքին աղբ է, ինձ մոտ դիմադրություն է առաջանալու: Էդտեղ իմ անդորրն է խախտվելու, իմ խաղաղությունը որոշակիորեն տուժելու է, եթե տարածքը մաքուր չի»:*

Տարածված տեսակետ էր հետևյալ գաղափարը, որ թեև կոնֆլիկտի առկայությունը դեռևս չի նշանակում խաղաղության բացակայություն,

սակայն եթե կոնֆլիկտը դրսևորվում է թեկուզ կարճատև և լոկալ ռազմական, ֆիզիկական բախումների տեսքով, այդ դեպքում կարող ենք ասել, որ չկա խաղաղություն:

Հետաքրքիր է նաև այն, որ շատերը խաղաղությունը դիտարկել են որպես՝
«գերնպատակ»,
«գերերազանք»,
«մի բան, որ ապահովություն, ուրախություն է բերում»:

Նշվել է նաև, որ խաղաղությունը հարաբերական բան է: Միևնույն ժամանակ մասնակիցներից շատերը նշել են, որ բոլորն էլ ցանկանում են, որ խաղաղություն լինի:

> *«Մենք բոլորս էլ հասկանում ենք՝ ինչ վիճակում է Հայաստանը և բոլորս էլ ուզում ենք խաղաղություն: Զգիտեմ ես անձամբ ուզում եմ և կարծում եմ, որ մեզ համար, էստեղ ապրող ժողովրդի համար և հակառակորդի համար խաղաղությունը կարևոր է, իրանց համար էլ է կարևոր» (նկատի ունի ադրբեջանցիներին):*

Հայաստանը և խաղաղությունը

Մասնակիցներից շատերը նկատել են, որ երկրի մասշտաբով խաղաղություն չկա, քանի որ կա կոնֆլիկտ Ադրբեջանի հետ, սակայն միևնույն ժամանակ նշում էին, որ երկրի ներսում խաղաղ միջավայր է: Հարկ է նշել, որ սա ըստ էության նույն մոտեցումն է, ինչը եղել է անվտանգության հարցի հետ կապված քննարկումների ժամանակ:

> *«Եթե վերցնենք ավելի փոքր միջավայր, քան երկիրը, որովհետև երկրի պարագայում շատ դժվար է խոսել խաղաղությունից, եթե վերցնենք մեր քաղաքը, օրինակ, ինձ համար այն շատ խաղաղ տեղ է, ու ես էստեղ խաղաղություն զգնում եմ, օրինակ կարող եմ այստեղ ներդաշնակ զգալ, անհանգիստ չեմ զգում այս տարածքում, որոշակի վտանգներից զերծ եմ զգում»:*

Հնչել են նաև տեսակետներ, սակայն, որ Հայաստանում չկա խաղաղություն արտաքին և ներքին որոշակի խնդիրների պատճառով:

> *«Էս անվերջ թվացող անորոշությունը, համատարած անտարբերությունը վերանա, էսորվինի՝ ինձ թվում է խաղաղություն կլինի: Ոչ մեկ լուրջ բան չի ձեռնարկում, չի պլանավորում»:*

Անվտանգությանը և խաղաղությանը հասնելու միջոցները

Տարածված մոտեցում էր, որ անվտանգային սպառնալիքները կարող են չեզոքացվել որակյալ կրթությամբ, տարբեր ոլորտներում պրոֆեսիոնալ, բարձր արդյունավետությամբ գործող մասնագետների շնորհիվ:

«Պետք է ճիշտ մասնագետը լինի ճիշտ տեղում»:

«Լրիվ համաձայն եմ, որ ամեն ինչի հիմքը կրթությունն է, որքան կրթված ենք՝ այդքան նվազեցնում ենք մեզ կառավարելու ու, որոշակի առումով, մեզ ստրկացնելու հնարավորությունները»:

Գերիշխող տեսակետ էր, որ խաղաղության հասնելու համար *«...մենք պիտի պատրաստ լինենք, պիտի զինված լինենք: Մենք պիտի մեր հույսը դնենք մեր վրա»*:

Ոմանք նշում էին, որ մենք անվտագության խնդիրներ ունենք այն պատճառով, որ մեր աշխարհագրական դիրքը վատն է:

Շատերը խնդիրների լուծումը տեսնում էին հզոր բանակ ունենալու, միասնական լինելու և հուսալի գործընկներ ունենալու մեջ:

Տարածված մոտեցում էր, որ անվտանգ միջավայր ունենալու համար պետք է արտաքին քաղաքական վեկտոր փոխել, արդյունքում՝ ունենալ հզոր եւ վստահելի դաշնակից.

«Այսինքն անաառողջ և ատելությամբ լցված միմյանց ոչնչացնելու, թշնամական, էդ հարաբերությունն է, որ խաղաղությունը վերացնում է»:

«Էնպիսի պետություններ, որոնք նաև մեզ թիկունք լինեն, որովհետև փորձը ցույց տվեց, որ էն ամեն ինչի վրա, որ հույսը դրել էինք, այնքան էլ չարդարացրեց (զրո էր) և ես գտնում եմ, որ վեկտորը փոխելը շատ ճիշտ է էս պահին»:

«...որովհետև տեսանք ռուսը ինչ արեց մեզ»:

Գերիշխող մոտեցում էր, որ անվտանգության հասնելու համար հարկավոր է, որ վերանա այն ատելության, վիրավորանքներով լի մթնոլորտը, որը ստեղծում են որոշ ներքին և արտաքին ուժեր: Որպես անվտանգային խնդիրների լուծման, խաղաղության հասնելու ճանապարհ դիտարկվում էր ինֆորմացիոն հարձակումների, ապատեղեկատվության դեմ պայքարելը, միջանձնային փոխհարաբերությունների առողջացումը, պրոֆեսիոնալիզմի բարձրացումը բոլոր ոլորտներում և մակարդակներում:

Նաև շատերը նկատել են, որ սխալ է բոլոր խնդիների պատճառները դրսում տեսնել.

> *«Շվեյցարիան նենց տնտեսություն ա ստեղծել, որ իրա վրա արտաքին ոչ մի ազդեցություն չի կարում ազդի»:*

> *«Իմ կարծիքով խաղաղությունն ու անվտանգությունը պետք ա թելադրես: Շվեյցարիան, Գերմանիան իրանք խաղաղություն են թելադրում»:*

Ի դեպ, պետք է նկատել, որ շատ հաճախ է որպես խաղաղ երկրի օրինակ հիշատակվել Շվեյցարիան:

> *«Կոնկրետ Շվեյցարիան, այն խաղաղ երկիր է, թե անհանգիստ: Արդյո՞ք խաղաղություն կա այնտեղ: Իհարկե կա, որովհետև Շվեյցարիայի հարևան պետություններից ոչ մեկը ո՛չ ոիսկ է անում հարձակվի, ո՛չ էլ վախենում է Շվեյցարիայից, ուղղակի նրանց ձեռնտու չէ, որ թեկուզ մեկ մարդու անվտանգությունը վտանգվի»:*

Մասնակիցներից ոմանք նշել են, որ ժողովրդավարությունը թուլացրել է Հայաստանի անվտանգությունը և ժողովրդավարությանը հակադրել են «ազգային» կառավարումը, որն ըստ նրանց կարող է լուծել անվտանգային խնդիրները:

> *«Հիմա ազգովի Հայաստանի բնակչությունը պրոպագանդում ա ժողովրդավարություն՝ սկսած գլխավոր ղեկավար մարմնից, երկրի պատասխանատուից: Բայց պետք ա հասկանանք, որ մենք փոքր ազգ ենք՝ քիչ բնակչությամբ, և պետք ա պահենք մեր ազգայինը: Ժողովրդավարությունը պետք ա լինի մեր 3-րդ կետը: 2018 թվականից, երբ մենք դարձանք ժողովրդավար, մեր անվտանգությունը փլուզվեց: Այ դա ես ուղիղ կապում եմ ժողովրդավարության հետ»:*

Սակայն հարկ է նշել, որ այս մոտեցումը դոմինանտ չի եղել ֆոկուս խմբերի մասնակիցների շրջանում:

«Համակարծիք չեմ, որովհետև ժողովրդավարությունը, իմ կարծիքով, ոչ թե հանդիսանում ա էն փաստը, որի պատճառով մենք հիմա պատերազմի մեջ ենք եղել էս 44-օրյա պատերազմի հետ կապված, այլ ժողովրդավարությունը իմ համար էնպիսի գործիք ա, որ ստեղծված ա նրա համար, որ ժողովուրդը կարողանա իր պետության մեջ իր ներդրումը կատարի»:

Հնչել են նաև տեսակետներ, որ ևս մեկ պատերազմ է պետք, որպեսզի հասնենք խաղաղության: Այսպիսի մոտեցումը մասնակիցներից ոմանք հիմնավորել են նրանով, որ հզոր պետությունից կվախենան և չեն հարձակվի:

«Առանց պատերազմ խաղաղություն չի լինելու»,

«ամենալավ պաշտպանությունը դա հարձակումն է»:

Սակայն նույնիսկ նրանք, որոնք ասել են, որ խաղաղության և անվտանգության հասնելու համար պատերազմել է պետք, նշել են, որ սկզբից պետք է փորձել բանակցությունների միջոցով լուծել հարցերը:

Պատերազմով խաղաղության հասնելու նարատիվը ամենահաճախ է վիճարկվել և դարձել բանավեճի առարկա: Վիճարկողների ընդհանրական մոտեցումը շատ լավ արտացոլում է մասնակցիներից երկուսի (որոնցից մեկն, ի դեպ, 44-օրյա ռազմական գործողությունների մասնակից է եղել) հետևյալ խոսքերը.

«Եթե էմոցիոնալ առումով ենք նայում, շատ մեծ ցանկություն կա Արցախը վերադարձնելու, բայց նախ դա կլինի շատ մեծ զոհերի գնով, շատ ծանր կլինի մեզ համար, բայց եթե եր բերենք, էլի նորից բանակցությունները շարունակվելու են, ու ինչ-որ հստակ կարգավիճակ ես այս պահին էդքան էլ լավ չեմ պատկերացնում... Պատերազմել, պատերազմել, բայց ո՞վ ա ուզում պատերազմել: Ժողովրդի 99,9%-ը չի ուզում, իսկ մյուս 0,1%-ի մեջ դուք էլ եք մտնում: Բայց, էսպես ասած, պատերազմի իմաստը այն է, որ մեր երկրի կենսամակարդակը բարելավվի, ավելի լավ կենսակերպով մենք սկսենք ապրել, բայց դա էդպես չի: Մենք զարգանանք, մեր բանակը զարգացնենք, բայց նենց չի մյուս պետությունները նույն տեղում մնում են. իրենք էլ են զարգանում, նորանոր տեխնիկաներ ձեռք բերում»:

Որպես խաղաղության հասնելու միջոց՝ առաջարկվել է նաև այնպես անել, որ այլ երկրներ Հայաստանից որոշակի կախում ունենան և շահագրգռված լինեն, որ Հայաստանում խաղաղություն լինի: Ի պատասխան այս մոտեցման՝ կարծիք է հնչել, որ իրականում Հայաստանից շատերն են կախված, ուղղակի Հայաստանը դա չի կարողանում օգտագործել:

Նկատվել է, որ մասնակիցներից շատերը խաղաղության հասնելու համար ընդունելի են համարել որոշակի կոմպրոմիսները, սակայն նշել են, որ օրինակ, Զանգեզուրի ուղին պետք է հստակ լինի ՀՀ վերահսկողության ներքո. *«ռուսին չտան, ադրբեջանցուն չտան»*:

Տարածված նարատիվ է եղել այն, որ անվտանգությանը հասնելու համար հարկավոր է ունենալ ցածր կոռուպցիա եւ բարձր քաղաքացիական գիտակցություն ունեցող հասարակություն: Ընդ որում, ոմանք նշել են, որ հիմնական խնդիրը հասարակությունն է. *«Մեր ղեկավարներին չպիտի փոխենք, մեր ժողովրդին պետք է փոխենք»*:

Հնչել է տեսակետ, որ անվտանգ միջավայր ունենալու համար պետք է ներգրավել տարբեր երկրներում ապրող բանիմաց, գիտելիք ունեցող հայերին: Հարկ է նշել, որ ֆոկուս խմբի մասնակիցներից շատերը թերահավատ են եղել խաղաղության հաստատման հնարավորության առումով: Նշվել է, որ որոշ արտաքին ուժերի ձեռնտու չէ խաղաղությունը, և այստեղ կրկին մեղադրանքն ուղղվել է Ռուսաստանի հասցեին:

> *«Երրորդ ուժին ձեռք չի տալիս խաղաղությունը, էն ուժին, որ մեր վրա զենք էր վաճառում: Եթե մենք էդ գումարները, միլիարդավոր դոլարները ներդնեինք առողջապահության, կրթության, գիտության մեջ, մենք հիմա էս երեսուն տարվա մեջ կհասնեինք եվրոպական երկրներին»:*

Հարցվածներից շատերը նկատել են, որ սխալ է բոլոր խնդիրների պատճառները դրսում տեսնել:

> *«Իմ համար կլինի խաղաղ էն ժամանակ, երբ ունենանք գրագետ քաղաքականություն, գրագետ վարված նմանատիպ բաներ, բոլորը աջուձախ չեն ենթարկվի պրոպագանդայի, չեն վազի Ռուսաստանի կողմ, Արևմուտքի կողմ: Ես մտածում եմ, որ ոչ մեկը մեզ չի կարա օգնի՝ մեր սեփական անձից բացի»:*

> *«Խաղաղ միջավայր ստեղծելու համար նախ պետք ա ազգի մտածելակերպը, մենթալիտետը մի քիչ բերել նրան, որ պետք չի լինել ռուսամետ կամ արևմտամետ, նախ և առաջ պետք է լինել հայամետ»:*

Հնչել է նաև տեսակետ, որ հայ-ադրբեջանական պատերազմն այնուամենայնիվ տեղի ունեցավ այն պատճառով, որ *«Ղարաբաղը օկուպացված տարածք էր, ամբողջ աշխարհը գիտեր, որ Ղարաբաղն օկուպացված տարածք էր Հայաստանի կողմից»*:

Եղել են նաև տեսակետներ, որ խաղաղություն և անվտանգություն ունենալու համար հարկավոր է, որ հասարակությունը թոթափի հոգեբանական տրավմաները. *«Հայ հասարակությունը նեւրոզի մեջ է: Մենք լուրջ հոգեբանի կարիք ունենք ամբողջ ազգով»*:

Բարեկեցության վերաբերյալ պատկերացումները

Ինչ է բարեկեցությունը

Ֆոկուս խմբերի մասնակիցներից շատերը նշել են, որ բարեկեցությունը շատ հարաբերական հասկացություն է: Գերիշխող մոտեցում է եղել, որ բարեկեցությունը կապված է պետության անվտանգության և տնտեսական զարգացվածության հետ: Շատերի համար բարեկեցիկ լինելու գլխավոր նախապայմաններից մեկն այն է, որ պետության բնակչության մեծ մասը աղքատության մեջ չլինի:

> *«Պատերազմից հետո դու չես կարողանում մտածել... նույնիսկ եթե ունես գումար ու ուզում ես գնաս, մտածում ես՝ բա կողքինս, ինքը ամուսին ա կորցրել, էրեխեն վատ ա ապրում: Մենք ամաչում ենք լավ հագնվենք, լավ մեքենա ունենանք, որովհետև մեր կողքինը արդեն վատ ա: Բարեկեցությունը էն ա, որ ընդհանուր միջավայրը, շրջապատս բարեկեցիկ ա, ոչ թե մենակ ես եմ լավ ապրում, այլ միջավայրը, որ բոլորը մտածում են ճանապարհորդության մասին, լավ կրթության մասին, կրթությունը շարունակելու մասին, աշխատանքի մասին, նոր աշխատատեղերի մասին»:*

> *«Այո տնտեսական զարգացման բարձր մակարդակ ունենա, որ էսպես երազանքով չնայենք, որ Ֆրանսիան այս ու այն ունի, կամ ուրիշ պետություն, մենք էլ կարողանանք որոշակի մակարդակի հասնել»:*

Շատերը նշել են, որ բարեկեցությունը կապված է հոգեկան հանգստության հետ, իսկ հոգեկան հագստությունը Հայաստանի պարագայում մեծապես կապված է անվտանգային խնդիրների, մասնավորապես, հայ-ադրբեջանական կոնֆլիկտի հետ: Այս առումով տարածված մոտեցում է եղել, որ թեժ, ռազմական գործողություններով հագեցած կոնֆլիկտը թույլ չի տալիս բարեկեցիկ լինել:

> *«Գիտեք թեկուզ 1 միլիոն էլ որ ունենամ, գլուխս դնում եմ բարձին, առավոտ աչքերս չբացած ՊՆ-ի սայթն եմ մտնում՝ տեսնեմ հո չեն կրակել, հո չեն զանգելու տղեքիս բանակ տանեն, ինչիս է պետք էդ միլիոնը»:*

Գերիշխող նարատիվ է, որ բարեկեցիկ ապրելու դեպքում մարդը կարողանում է ապրել այնպես, ինչպես ցանկանում է:

> *«Պետության մեջ լինեն աշխատատեղեր, կարողանանք ստեղծել բավարար գումար, որ ստեղծենք այն հնարավորությունը, որ յուրաքանչյուրս ընտանիքի անդամներով կարողանանաք ապրել մեր ուզած ձևով»:*

Շատերը բարեկեցությունը կապել են լավ վարձատրվող աշխատանքի առկայության հետ:

> *«Ովքեր ի վիճակի են աշխատելու, բոլորն ապահոված լինեն աշխատանքով»:*

Ինչ է պետք բարեկեցիկ կյանք ունենալու համար

Հետաքրքիր է արձանագրել, որ մասնակիցների գերիշխող մասը միայն քննարկման ժամանակ է սկսել մտածել այն մասին, թե որքան եկամուտ է անհրաժեշտ բարեկեցիկ կյանք ունենալու համար: Ամենատարածված պատասխանը՝ մեկ շնչի հաշվով ամսական 300 հազար դրամն է: Միևնույն ժամանակ հնչել են տեսակետներ, որ շատ բան կախված է նրանից, թե կոնկրետ որտեղ ես ապրում, օրինակ, ոմանց կարծիքով 300 հազար դրամ եկամուտը Երևանում ապրելու դեպքում ընդհանրապես բավարար չէ:

> *«Երբ ես ապրում էի Երևանում, ապրում էի 300 հազարանոց բնակարանում ու իմ համար 150 հազարը շատ քիչ ա: Էնտեղ լողի էի գնում, երեխաների մանկապարտեզը վճարովի էր 80 հազար և ավելի, այսինքն ինձ էնտեղ ամենաքիչը ամսական մեկ միլիոն դրամ էր պետք... Իսկ Եղեգնաձորում՝ 500 հազարը լրիվ բավարար է...»:*

Սակայն այստեղ պետք է նշել, որ շատերը նաև նշել են, որ ավելի քիչ եկամուտով նույնպես կարելի է բարեկեցիկ կյանք ունենալ, քանի որ բարեկեցությունը շատ սուբյեկտիվ է՝ կապված է կյանքի անհատական ընկալման հետ:

> *«Ինձ համար կարող է նստեմ էն նստարանին, քեզ հետ խոսեմ՝ դա էլ լինի բարեկեցություն, հարմարավետ է: Այսինքն՝ հարաբերական է»:*

«Օրինակ իմ համար բարեկեցիկ է, երբ որ տանը հանգստություն է, լռություն է, խաղաղություն է»:

«Գնացել էի ծով հանգստանալու, եկա ասեցի նման բան կազմակերպեմ: Վաննայի մեջ ջուր լցրեցի, մի բաժակ գինի, պառկեցի ջրի մեջ, աչքերս փակեցի ու զգացի ինձ բարեկեցիկ երկրում: Ինչո՞ւ եմ էդ օրինակը բերում: Ես էդ բարեկեցությունը բերեցի հարմարացրեցի ինձ»:

Հետաքրքիր հանգամանք է այն, որ շատերի համար բարեկեցիկ կյանքի շատ կարեւոր և անհրաժեշտ բաղադրիչ է հանդիսանում սեփական բնակարան ունենալը: Մարդիկ նշել են, որ վարձով ապրելը տհաճություն է պատճառում իրենց, որ իրենք չեն կարողանում լիարժեք հարմարվել վարձով բնակարանին, չեն կարողանում ապագայի համար հանգիստ լինել: Ոմանք սեփական բնակարան ունենալը կապել են ազգային խառնվածքի հետ: Հատկանշական է, որ ըստ շատերի, այն մարդիկ, որոնք, օրինակ, Նյու Յորքի նման քաղաքում բնակարան են վարձակալում և չունեն սեփականը, ուրեմն չունեն նաև բարեկեցիկ կյանք:

«Մենք հայ ենք և մտածում ենք, որ սեփականը ավելի անհրաժեշտ է: Մեր մոտ սեփականության զգացումը շատ խոր արմատներ ունի»:

«Իմ տունը չէր էլի, ես զգում էի, որն ժամանակավոր էր: Հետո տուն ստացանք, հիմա ես ինձ համարում եմ նորից բարեկեցիկ ապրող մարդ՝ չնայած տան միակ աշխատողն եմ, մանկավարժ եմ, ցածր աշխատավարձով»:

Ռեսպոնդենտների մեծ մասը բարեկեցության կարեւոր բաղադրիչներ են համարել նաև մշակութային կյանքով ապրելու հնարավորություն, հարևանների, ընկերների և բարեկամների հետ լիարժեք, դրական հարաբերություններ ունենալը, լավ տրանսպորտային հաղորդակցություն ունենալը, ժամանցային վայրերի հասանելիությունը:

«Ես ուզում եմ, օրինակ, գնալ մի ներկայացում դիտելու, ես աշխատում եմ ոչ թե, որ մենակ առավոտյան աշխատանքի գնամ, երեկոյան վերադառնամ տուն՝ ասեմ այ կնիկ ինչ ես եփել, դա դեռ շատ քիչ բան է: Ինձ պետք է, որ իմ հարևանի տուն գնամ, ես էլ շնորհավորեմ, հարսանիք լինի՝ ես էլ թևերս բարձրացնեմ-ուրախանամ, եթե դժբախտ պատահար է՝ ինչու չէ, հարազատներին մխիթարելու: Դա բարեկեցության համար անհրաժեշտ նախադրյալ է, որ ասեն՝ այ էս մարդը վերջապես դատրիարակություն է ստացել, էլի»:

Առանց խաղաղության, բայց բարեկեցիկ

Հարկ է նաև նշել, որ թեև եղել է կոնսենսուս այն հարցի վերաբերյալ, որ խաղաղության բացակայությունը հնարավորություն չի տալիս բարեկեցիկ կյանք ունենալ, սակայն ոմանք միևնույն ժամանակ նշել են, որ հենց այս պահին էլ բարեկեցիկ կյանքով են ապրում, քանի որ կարողանում են անընդհատ չմտածել խաղաղության բացակայության մասին և իրենք իրենց տրամադրում են, որ ապրում են բարեկեցիկ կյանքով. *«...ես ինձ համարում եմ բարեկեցիկ կյանքով ապրող՝ ոչինչ որ բոթասս ծակ է, ոչինչ որ շալվարս ուրիշի է, ոչինչ որ բաղնիքս լցնովի ա: Հարաբերական է բարեկեցիկը: Ես աշխատանքի ժամին լցնում եմ վիսկի, դասական երաժշտություն եմ լսում ու ինձ համարում եմ բարեկեցիկ կյանքով ապրող»*:

Ազատության վերաբերյալ պատկերացումները

Ինչ է ազատությունը

Ֆոկուս խմբի մասնակիցներից շատերը նշել են, որ ազատությունը հարաբերական հասկացություն է, որ լիարժեք ազատություն որևէ տեղ գոյություն չունի: Հատկանշական է, որ շատերի համար ազատության սահմանափակում է դիտարկվել այն, որ իրենք ստիպված են հաշվի առնել իրենց մասին եղած հանրային կարծիքն ու ըստ այդմ կառուցել սեփական վարքը: Ոմանք այդ մոտեցումը հիմնավորել են նրանով, որ ստիպված են սահմանափակել իրենց ազատությունը, քանի որ հակառակ պարագայում, օրինակ, իրենց ընկերական շրջապատը խիստ կնեղանա իրենցից: Ըստ էության՝ մոտեցումն այն է, որ սոցիալական կյանքում նրանց կյանքը զգալիորեն կբարդանա, եթե իրենք իրենց թույլ տան ազատ կյանքով ապրել.

> *«Ես իմ ընտանիքում, օրինակ, ինձ ազատ եմ զգում, բայց ընտանիքից դուրս ես գալիս՝ թեկուզ էդ փոքր գյուղի հասարակության մեջ դու ազատ չես»:*

> *«Լիարժեք ազատություն չկա, որովհետև կախված ենք հասարակության կարծիքից»:*

Բացի այդ, շատերի համար այն հանգամանքը, որ չեն կարող անել այն, ինչ իրենց մտքով անցնում է, նույնպես դիտարկվել է որպես ազատության սահմանափակում. *«Եթե կարողանանք անել այն, ինչ ուզում ենք և անել այն, ինչ կարողանում ենք՝ դա կլինի ազատություն, բայց բաներ կան, որ արգելք են, իսկ սա եւ ընտանիքից, եւ հասարակական կարծիքից...»*:

Սակայն շատերն էլ նշել են, որ, այնուամենայնիվ, ազատությունը այն է, որ դու կարող ես առանց պատժի ենթարկվելու անել այն, ինչ ուզում ես, եթե այդ ամենը չի վնասում ուրիշին:

> *«Ինձ համար ազատությունը դա այն է, որ դու անկաշկանդ ես՝ արտահայտվելու և անկաշկանդ ես իրականացնելու յուրաքանչյուր քայլ, որը ցանկանում ես, և որը որ չի խախտում պետական օրենքները»:*

> *«Ազատությունը, դա այն է, որը չես վնասում դիմացինի իրավունքները»:*

Ազատությունը Հայաստանում

Հարկ է նշել, որ Հայաստանում քաղաքական և քաղաքացիական ազատությունների իրացման առումով մասնակիցների բացարձակ մեծամասնությունը խնդիր չի տեսնում.

> *«Ազատ ընտրում ենք և նույնիսկ ընտանիքում տարբեր մոտեցումներ ունենք»,*

> *«Մարդիկ իրենց ազատ են զգում Հայաստանում»,*

> *«Հիմա իմ ամուսինը դաշնակ է, ես չեմ ուզում, չեմ էլ ընտրում: Ես ինքս անկախ եմ, ես ում ուզում եմ՝ իրան եմ ընտրում»,*

> *«Մենք, համեմատած որոշ երկրների հետ, չենք ապրում բռնապետական երկրում, այսինքն պետությունն ինչ-որ կոնկրետ բռնություն չի գործադրում մարդկանց վրա, բայց մեր քայլերի պատասխանատուն մենք ենք արդեն»,*

> *«Տեղաշարժվելու հնարավորություն՝ իմ ուզած ժամին, իմ ուզած տեղում: Իմ մտքերը ազատ արտահայտում եմ, ոչ մեկ ինձ չի ստիպում, որ ես չասեմ ինչ-որ մի բան, դա էլ է ազատություն, ինչի մասին որ երազում եմ, ոչ մեկ ինձ չի ասում, որ չես կարող իրականացնել, ինչ ուզում եմ՝ հագնում եմ»:*

Հարկ է նշել, որ շատերը մեծ խնդիր էին համարում այն, որ խոսքի ազատությունը հաճախ չարաշահվում է ատելություն սերմանելու, ներքին խժդժություններ առաջացնելու նպատակով:

Ոմանք նշել են, որ իրենց ազատությունը սահմանափակված է, քանի որ, օրինակ, որոշ մտքեր արտահայտելու արդյունքում կարող են աշխատանքից զրկվել կամ քննադատվել շրջապատի կողմից: Հարկ է նշել, որ նման տեսակետ հայտնողները, որպես կանոն, պետական կրթական հաստատությունների աշխատակիցներ էին: Իսկ այն պարզաբանող հարցին, թե արդյո՞ք իրենց որևէ պետական պաշտոնյա սպառնացել է՝ մասնակիցները նշում էին, որ սպառնալիքը, որ աշխատանքից կազատեն, անուղղակի է եղել. *«Բացի վնասելուց, քաղաքական տեսանկյունից, երբ գործող իշխանությանը դեմ ինչ-որ տեսակետ եմ արտահայտում, ես արդեն թիրախավորվում եմ շրջապատի կողմից: Այսինքն, ինձ էնպես են ճնշում, որ՝ դու սխալ ես, միևնույնն է, ղեկավարը ինչ արել է՝ ճիշտ է արել»:*

«Կրթության բաժնի պետը զանգում է տեսուչին, տեսուչը գալիս է, ասում է դու էն օրը սենց բան ես արել, մի արա, կամ տղուդ են տեսնում ասում են հորդ ասա էդ բանը մի գրի, մեկա էդ բանի տեղ չեն դնում: Տղես էլ գալիս ա, ասումա դու գրել ես ԿԳՄՄ-ի մասին բան, որ կարդացել է մարզպետի օգնականը, գնացել՝ ասել է, էնտեղ էլ ԿԳՄՄ-ի վարչության պետը իր աշխատողի միջոցով զանգել է տղուս»:

Հետաքրքիր է նաև արձանագրել, որ ոմանք որպես խոսքի ազատության սահմանափակում են դիտարկել այն, որ, օրինակ, դպրոցում չեն կարողանում նախատել երեխաներին, որ նրանք չնայեն թուրքական սերիալ, կամ որ իրենք չեն կարողանում կրթական հաստատություններում հայրենասիրական ոգով դաստիարակել երեխաներին, ինչը, ըստ իրենց պատկերացումների, նաև նշանակում է այն, որ, օրինակ, պետք է հնարավորություն ունենալ երեխային ասել, որ «թուրքը մեր թշնամին է»:

«Ուսուցիչը մտնում է դասարան՝ հայրենասիրություն իրավունք չունի քարոզելու: Ինչո՞ւ: Ուսուցչին հեռացնում են, որովհետև ոմն ծնողի երեխա հուզվել է, ինչ է Արցախի իրավիճակն է քննարկել... Դասարանում հարցազրույց եմ տարել ընդամենը: Ես կարող եմ բացահայտ ասել, որ ես ունեմ միակ թշնամի՝ թուրքն է, ադրբեջանցին իմ հայ ազգի թշնամին է, բացահայտ կասեմ և այդ բացահայտ ասելու համար կարող է ժամանակ գալ, հասնի մի պահ, որ ես դրա համար տույժի ենթարկվեմ...Դե արի էդ երեխային բացատրի, որ թուրքը, ադրբեջանցին քո թշնամին է, ուզում է ոտնահարել քո իրավունքները, քո երկիրն է գրավում: Բա երեխային ո՞նց հայրենասիրություն դաստիարակենք»:

Շատերը կապում էին ազատությունը անվտանգության հետ՝ նշելով, որ, օրինակ, շատ սահմանամերձ բնակավայրերում մարդիկ չեն կարողանում ազատ ապրել, չեն կարողանում հանգիստ զբաղվել գյուղատնտեսական աշխատանքներով, քանի որ յուրաքանչյուր պահի կարող են ադրբեջանիցների հարձակման զոհ դառնալ:

«Ինքը իր այլ երկրացիների նման ազատ չի կարողանում մտնի՝ հող մշակի»:

«30 տարի էդ մարդիկ ոչ անվտանգության տակ են ապրել ու ազատ չեն իրենց գործողություններում: Եթե ես չեմ կարող իմ լույսը վառել ինչո՞ւ եմ ազատ, որովհետև եթե վառեմ՝ դիրքից կրակոց է գալու»:

Ինքնության մասին պատկերացումները

Ի՞նչ է ինքնությունը և ո՞ր ինքնությունն է կարևոր

Ռեսպոնդենտների մեծ մասն ազգային ինքնությունն առաջնային է համարում: Ընդ որում՝ այն առաջին հերթին ընկալվում է որպես էթնիկ ինքնություն, այսինքն, հայ էթնոսին պատկանելն է ֆոկուս խմբերի մասնակիցների հիմնական ինքնության հիմքը. *«ազգային ինքնություն, ազգային արժեքներ, դրանց պահպանումը: Էդ մոտիվներն ա ինձ մոտ գալիս: Ինքնություն ասելով՝ առաջինը դրանք եմ պատկերացնում: Ազգային տարրն ա ինձ մոտ գալիս»:*

> *«Ես որ ասում եմ մենք՝ հայերս, հենց հայերին ի նկատի ունեմ՝ առանց ազգային փոքրամասնությունների»:*

Էթնիկ ինքնությունից հետո մարդիկ շատ հաճախ մատնանշում էին իրենց կրոնական, աշխարհայացքային, մշակութային, սեռային և տարիքային ինքնությունը.

> *«Որ ինձ նայեն՝ իմանան, որ այ էս մարդը Ագապի է և ոչ թե Պողոս: Նույն աշխարհայացքը, մշակույթը, կրոնը ամեն ինչ մտնում է մեջը»:*

> *«Ես աղջիկ եմ, ես քրիստոնյա եմ, ես հայ եմ, ես երիտասարդ եմ, մայր եմ. կարգավիճակներ, որոնք քո ինքնության մասն են»:*

Հետաքրքիր փաստ է, որ միայն հարցադրում անելուց հետո մասնակիցները սկսեցին խոսել այն մասին, որ իրենք ունեն նաև ազգային-պետական ինքնություն: Այսինքն՝ ինքնություն, որը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելու, հատուկ Հայաստանի ժողովրդին՝ անկախ էթնիկ պատկանելությունից:

Այս ինքնությունն առավել շատ արտահայտվում է անվտանգային խնդիրների կոնտեքստում: Ռեսպոնդենտները նշում էին, որ Հայաստանի ժողովուրդն է, որ անվտանգային խնդիրներ ունի, որ Հայաստանի ժողովրդի բանակն է, որտեղ նաև ծառայում են այլ էթնիկ խմբերի ներկայացուցիչ ՀՀ քաղաքացիներ՝ եզդիներ, ռուսներ, ասորիներ և այլն, որ զբաղվում է սահմանների անվտանգությունը պաշտպանելով:

Այնուամենայնիվ, չկա միասնական մոտեցում այն հարցի շուրջ, թե **«մենք՝ հայերս»** արտահայտությունը ներառում է ՀՀ ժողովրդին, Հայաստանում բնակվող էթնիկ հայերին, թե ընդհանրապես աշխարհի բոլոր հայերին: Թեև բոլոր ռեսպոնդենտները նշել են, որ ՀՀ ժողովրդի մաս կազմող բոլորը մենք-ի մաս են, սակայն ոմանք նշել են, որ հայ ժողովուրդ ասելով իրենք նկատի ունեն միայն էթնիկ հայերին: Շատերը նշել են նաև, որ օրինակ հայ ժողովրդի իղձեր, հայկական արժեքներ և այլն ասելով, նրանք նկատի ունեն միայն հայ էթնոսին վերաբերող իղձեր, արժեքներ և այլն: Քիչ չեն եղել, սակայն, նաև նրանք, որոնք ասել են, որ ազգային ինքնությունը միայն արյունակցական հիմքի վրա չէ ձևավորվում:

> *«Հայ» որ ասում ենք, ես մենակ արյունակից չեմ հասկանում, պիտի քեզ հայ զգաս, համարես: Մարգարիտա Սիմոնյանը հիմա հա՞յ ա, թե՞ հայ չի: Իմ կարծիքով՝ եթե մարդը Հայաստանում չի ապրել, ինքը հայ ա, բայց չի կարա մեր ու իրա արժեքները նույնը լինեն»:*

> *«Հիմա ազգությունը թույլ ա տալիս, որ մենք որոշենք մեր կրոնը, մեր ինքնությունը, սեռը, բայց ես կարծում եմ, որ ճիշտը էն ա, ոնց որ մենք ծնվել ենք: Ես չեմ ընտրել՝ հայ ծնվեմ, թուրք, թե ռուս, ես ծնվել եմ հայ: Ես չեմ ընտրել, թե որ ծնողից ծնվեմ, ես ծնվել եմ իմ ծնողից: Իմ ինքնությունը հայ լինելն ա, հայը շարունակելն ա»:*

> *«Ինձ թվում ա, որ հայ ա նա, դա կարա լինի ռուս, թուրք, չգիտեմ, ով իրան հենց էդ ազգի ներկայացուցիչ ա զգում: Օրինակ ես ինձ հայ եմ զգում, ես հայ եմ: Մեկը, օրինակ եզդին, ճիշտ ա ինքը եզդիական համայնքի ներկայացուցիչ ա, բայց եթե ասում ա ես հայ եմ, ուրեմն հայ ա»:*

Եղել են նաև ռեսպոնդենտներ, որոնք ինքնությունը կապել են մարդ լինելու հետ:

> *«Ինքնությունն ավելի շատ կապում եմ հոգու հետ, հոգին անմահ է, մարմինը՝ ժամանակավոր» Հիմա էս պահին մենք մտել ենք էս մարմնի մեջ, էս տեսքով ենք, բայց կարևորը հոգին է, այսինքն լինել բարի, լինել ուշադիր, մարդկանց սիրող»:*

Ո՞ր ինքնությունն է վտանգված

Հարցվածների շրջանում տարածված մոտեցում էր, որ իրենց իքնություններից վտանգված է հիմնականում էթնիկ ինքնությունը, ինչպես նաև, որոշ առումներով, կրոնական, մշակութային ինքնությունը: Որպես այդ ինքնությունը վտանգի ենթարկող սուբյեկտներ նշվել են Արդբեջանն ու Թուրքիան, որոնք, ըստ հարցվածների, ցանկանում են մեծ վնաս հասցնել հենց հայ էթնոսին և նրա քրիստոնեական, մշակութային արժեքներին: Ինքնությանը վտանգնողների շարքում նշվել են նաև Ադրբեջանին զենք վաճառող Ռուսաստանը, Թուրքիան, Պակիստանը, Իսրայելը.

> *«Թշնամին իմանալով, որ ես հայ եմ, կարա իմ հայ լինելու համար ինձ սպանի: Բայց եթե իմանա, որ ես հրեա եմ՝ ինձ չսպանի»;*

> *«Արցախի տարածքում ունենք հսկայական մշակութային ժառանգություն թողած, որոնք անխնա ոչնչացվելու են, վստահաբար: Ու դա վնաս է իմ քրիստոնեական ինքնությանը»:*

Եղել են նաև մոտեցումներ, որ իրենց կրոնական ինքնությունը վտանգված է նաև այլ կրոնական կազմակերպությունների (հիմնականում՝ նեոբողոքական) գործունեության պատճառով:

Գերիշխող մոտեցում էր, որ իրենց սեռային կամ աշխարհայացքային ինքնությանը որեւէ բան չի սպառնում:

Հայ-ադրբեջանական հարաբերությունները

Շարքային ադրբեջանցիների նկատմամբ վերաբերմունքը

Ռեսպոնդենտների զգալի հատվածը շարքային ադրբեջանցիներին չի դիտարկում որպես սպառնալիք և գտնում է, որ վերջիններս էլ են ցանկանում, որ խաղաղություն հաստատվի. *«Իմ կարծիքով՝ մեզ նման մարդիկ են, նրանք էլ պիտի մեզ նման մտածեն»*:

Շատերը կարծում էին, որ շարքային ադրբեջանցիները նույնպես Ալիևի զոհերն են և հիմնական խնդիրը նրանց հետ կապված այն է, որ հանդուրժում են Ալիևի ռեժիմը.*«Նրանք էլ, ինձ թվում ա, պրոպագանդայի զոհ են, նաև անընդհատ 30 տարի մեզ որպես թշնամի են ներկայացրել»*:

Ընդհանրապես, ներկայացված բազմաթիվ մոտեցումների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ շարքային ադրբեջանցիների նկատմամբ գոյություն ունի երկու հիմնական դժգոհություն. Ալիևին գահընկեց չեն անում և հայերի նկատմամբ ատելության խոսք են տարածում:

> *«Մենք սերիալների մեջ գովազդ ենք նայում, իսկ իրենց սերիալներն ընդհատվում են հայերի նկատմամբ ատելության խոսքով: Դա հատակ դրված բան է այնտեղ: Անգամ կենսաբանության տարրական դասագրքում գրված է, որ Ադրբեջան մտած էսինչ հիվանդությունը բերել են հայերը: Հայն է վիրուսը, ոչ թե վիրուսը տարածողը: Էս տեսակի ատելության խոսքն էնքան շատ է, որ էս մարդիկ, բնականաբար, ատում են հայերին»:*

Հետաքրքիր էր նաև արձանագրել, որ ոմանք իրենց բացասական կարծիքը շարքային ադրբեջանցիների նկատմամբ հիմնավորում էին նրանով, որ, օրինակ, մեկ անգամ ադրբեջանցու հետ բացասական շփման փորձ են ունեցել ինչ-որ տեղ:

Պատմական հիշողությունը ադրբեջանցիների նկատմամբ

Տարածված կարծիք էր, որ թեև հայերը նույնպես ադրբեջանցիների նկատմամբ բացասական հույզեր ձևավորելու ուղղությամբ պրոպագանդա են իրականացրել, սակայն հակահայկական պրոպագանդայի ծավալներն

անհամեմատ ավելի մեծ են: Նշվում էր, որ հակադրբեջանական պրոպագանդան նաև բնական հիմքեր ունի այն առումով, որ հայ ժողովուրդն իրոք մշտապես տուժել է թուրքերի/ադրբեջանցիների բռնի գործողություններից:

«Իմ պապի քույրը միշտ պատմում էր փախեփախի մասին, ոնց եկան ջարդեցին, ծնողներին կորցրեցին, իրանք ընկան ամերիկյան մանկատներ: Այսինքն՝ ես փոքր ժամանակից լսել եմ էդ վերապրածի բերանից, էնպես չի որ ես կարդացել եմ կամ հեռուստացույցով եմ էդ ամենը տեսել, էդ ամենն իմ երեխա ժամանակներից նստել է մեջս՝ փախեփախ, ջարդ, ծեծ, կոծ և այլն»:

Տարածված տեսակետ էր, որ այնուամենայնիվ խորհրդային ժամանակաշրջանում ադրբեջանցիների հետ կողք-կողքի նորմալ գոյակցել հնարավոր էր:

«Բարեկամություն կար, առևտուր կար, տանել-բերել...»:

Հարկ է նշել, որ ռեսպոնդենտների մոտեցումները կիսվել են այն հարցի վերաբերյալ, թե ինչպե՞ս պետք է վերաբերվել հայերի շրջանում տարածված «թուրքը մնում է թուրք» արտահայտությանը:

Շատերը համաձայնություն են հայտնել այդ արտահայտությանը՝ պատճառաբանելով հիմնականում նրանով, որ թուրքերի/ադրբեջանցիների բացարձակ մեծամասնությունը չի փոխում ծայրահեղ ագրեսիվ վերաբերմունքը հայերի նկատմամբ և այսօր էլ նրանք ցանկանում են կոտորել հայերին:

Սակայն, հաճախ նաև առաջ է քաշվել մեկ այլ նարատիվ, որ չի կարելի նման ընդհանրացումներ անել, որ, օրինակ, հնարավոր է, որ ընդհամենը ադրբեջանցիների/թուրքերի 20 տոկոսն է, որ ունի նման ցանկություններ: Քննարկումների ժամանակ խոսվել է նաև այն մասին, որ շատ թուրքեր օգնել են շատ հայերի խուսափել ջարդերից, թաքստոց են տրամադրել և այլն: Ոմանք նաև խոսել են թուրքերի/ադրբեջանցիների հետ իրենց ունեցած շփման բացասական փորձից բացի նաև շփման դրական փորձի մասին:

«Դե որ ասում են թուրք, էդ բառը մեզ մոտ արդեն զզվանք ա առաջացնում, բայց ես շփվել եմ շատ թուրքերի հետ, մեջներն եղել են փականքներ, որոնց հետ չարժեր բառ փոխանակել, բայց ես թուրքի հետ էլ եմ շփվել, որ մեր հարևան Վարդգեսից ավելի լավ մարդ է: Ու հազար անգամ ավելի լավ մարդ է էլի»:

Ինչպե՞ս լուծել կոնֆլիկտը

Ֆոկուս խմբերի մասնակիցների շրջանում տարածված մոտեցումներից էր այն, որ հայ-ադրբեջանական կոնֆլիկտը շարունակվելու է, քանի որ Բաքուն ցանկանում է վերացնել Հայաստանը և հայերին: Ըստ այդմ՝ հայերը պետք է պատրաստվեն պատերազմի, հզորանան և հուժկու հակահարված տան:

Սակայն, նույնպես տարածված նարատիվներից էր այն, որ կոնֆլիտը չի բխում տարածաշրջանի ժողովուրդների շահերից, որ այն ձեռնտու է միայն Ռուսաստանին:

> *«Այսինքն, կոնֆլիկտը շարունակվում է, որը ձեռնտու է միայն Ռուսաստանին»:*

> *«Ինչի՞ երեխաները գնան՝ զոհվեն»:*

> *«Շարքային խավի ներկայացուցիչները, ինչպես նրանք, այնպես էլ մենք, ոչ մեկ չի ուզում պատերազմ կամ ինչ-որ կոնֆլիկտներ, ուզում ենք, որ զոհեր չլինեն, ուզում ենք խաղաղ ապրել»:*

Խաղաղության պայմանագրի մասին

Մասնակիցներից շատերը թերահավատություն են հայտնել խաղաղության պայմանագրի կնքման հնարավորության վերաբերյալ: Շատերը նաև նշել են, որ նման պայմանագիրը երաշխիք չէ, որ նոր պատերազմ չի լինի:

- *«1000 տարի է խաղաղություն չի եղել՝ չի էլ լինի»:*
- *«Ոչ մի պայմանագիր էլ չի կարող լինել»:*
- *«Խաղաղ չենք լինի պայմանագրով»:*
- *«Բայց դուք ինչքանո՞վ եք վստահ, որ էդ խաղաղության պայմանագիրը հուսալի է»:*

Հնչել են նաև տեսակետներ, որ խաղաղության պայմանագիրը իրական խաղաղություն չի բերելու, փոխարենը՝ կարող է թուլացնել Հայաստանի դիմադրողականությունը.

> *«Ավելի լավ ա ես հզորանամ, գնամ պայքարեմ, քան ինչ-որ խաղաղության պայմանագրի շրջանակներում սահմանափակեմ ինձ ու անհասկանալի իրավիճակում հայտնվեմ»:*

Սակայն, տարածված կարծիք էր նաև այն, որ ներկայիս իրավիճակը վտանգներ է պարունակում և անհրաժեշտ են կոմպրոմիսներ.

> *«Հիմա մենք պարտված կողմ ենք, ու ինչ-որ կերպ պետք ա գիտակցենք, որ լեզու պետք ա գտնենք ինչ-որ մի առումով»:*

> *«Ես մի բան գիտեմ, որ սենց շարունակվել չի կարող, ես սպանեմ, դու սպանես, ախր էս էլ չի վիճակ»:*

Եղել են նաև մոտեցումներ, որ խաղաղության պայմանագիրը պարտադիր պետք է անդրադառնա Լեռնային Ղարաբաղի խնդրին:

> *«Ադրբեջանի հետ պայմանագրի հիմնական մեխը, ողնաշարը պիտի լինի Արցախը, ինչ է լինելու Արցախը: Բա եթե Արցախը չկա, էս մեր 5000 զոհը, էն 90-ականներից մինչը 2020 թվի զոհերը, ապրիլյանի զոհերը, ասենք էդ 30 տարվա զոհերը առ ոչինչ: Ասենք Արցախը չկա՞... ինչ, տեռորիստներ էին, Եռաբլուր չի կոչվում, այլ կոչվում է տեռորիստների բլո՞ւր»:*

Ռեսպոնդենտներից ոմանք նաև կարևոր էին համարում, որ մինչև պայմանագիր ստորագրելը, դրա տեքստը հանրային քննարկման առարկա դառնա:

> *«Իմ համար շատ կարևոր հանգամանք կլինի, եթե մենք ունենանք հանրային իրազեկում ասվածը, այսինքն՝ էդ պայմանագիր կոչվածը, մեր մասնագետները վերլուծեն, թող ամենքն իր տեսանկյունից ասի: Ոնց էլ չլինի, ոսկե միջինը դուրս կգա»:*

Եղել է կոնսենսուս այն հարցի վերաբերյալ, որ լավագույն տարբերակը կլինի, եթե պայմանագիրը հնարավորինս անդրադառնա բոլոր խնդրահարույց կետերին, որպեսզի հետագայում նոր կոնֆլիկտներ չլինեն: Եղել է նաև տեսակետ, որ նույնիսկ փխրուն խաղաղությունն ավելի լավ է, քան պատերազմը:

Մասնակիցներից շատերը նաև կարևորել են, որ պայմանագրի համար միջազգային երաշխավորներ լինեն, որոնք *«հետագայում արդեն եթե նկատվի, որ իրենք այ էդ պայմանագրի կետերը խախտում են, այ իրենք պետք է և պարտավոր են ճնշում գործադրել, որպեսզի տվյալ պետությունն ինքը հետևի էդ պայմանագրի կետերին»:*

Եզրակացություններ

Հետազոտությունը ցույց տվեց, որ ֆոկուս խմբի մասնակիցների հիմնարար պահանջմունքների հետ կապված ամենակարևոր խնդիրը՝ անվտանգ սահմաններ և խաղաղություն ունենալն է: Հետազոտվածների մեծամասնությունը գտնում է, որ Հայաստանում «նորմալ» ապրելուն խանգարող հիմնական հանգամանքը ռազմական կոնֆլիկտն է Ադրբեջանի հետ:

Ըստ էության, մարդիկ նշում են, որ իրենց հիմնարար պահանջմունքները կարող են լիարժեք բավարարված լինել միայն կայուն խաղաղության հաստատման դեպքում: Այսինքն, հարցվածների համար դա ամենակարևոր պայմանն է: Հարկ է նշել, սակայն, որ շատերի համար խաղաղությունը միայն պատերազմի բացակայությունն է:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ չնայած այն համոզվածությանը, որ Ադրբեջանի հետ կոնֆլիկտում, հատկապես վերջին շրջանում, հենց Ադրբեջանն է կոնֆլիկտի թեժացման պատասխանատուն, որ հայերը զոհի կարգավիճակում են, սակայն հարցվածների մեծամասնությունը հակված է սատարելու բոլոր այն կոմպրոմիսային լուծումներին, որոնք կարող են հանգեցնել Ադրբեջանի հետ հարաբերությունների նորմալացմանը՝ պայմանով, որ վերջինս չլինի Հայաստանի Հանրապետության սուվերենության հաշվին: Սակայն, քիչ չեն նաև նրանք, որոնք գտնում են, որ միևնույնն է Ադրբեջանը շարունակելու է պատերազմել, և այդ իսկ պատճառով պետք է պատրաստվել պատերազմի և չգնալ խաղաղության պայմանագրի կնքմանը:

Հետազոտությունը բացահայտում է, որ հարցվածների ստվար մասի համար ազգային ինքնությունն առաջնային է: Տարածված համոզմունք է, որ այդ ինքնությանը սպառնացող հիմնական վտանգն Ադրբեջանի հնարավոր հարձակումն է: Այստեղից կարելի է եզրակացնել, որ կայուն խաղաղության հաստատման պարագայում ազգային ինքնությունը կորցնելու վերաբերյալ մարդկանց մտահոգությունը կարող է էապես նվազել:

Քանի որ հարցվածների մեծ մասի համար հիմնարար կարիքների բավարարմանը խոչընդոտող ներքին (ներպետական) հիմնարար խնդիրը ինֆորմացիոն դաշտում, սոցիալական ցանցերում առկա ատելության մթնոլորտն է, ուստի, եթե մոտակա ժամանակահատվածում չիրականացվեն գործողություններ, որոնք էապես կնվազեցնեն ատելության խոսքի, ապատեղեկատվության ծավալները մեդիայում և սոցիալական ցանցերում, ապա ըստ ամենայնի մարդիկ հակված կլինեն կարծել, որ իրենց հիմնարար պահանջմունքների բավարարմանը սպառնացող ներքին երևույթները մեծամասամբ վերացված չեն, իսկ տագնապային տարամադրությունները հիմնականում կպահպանվեն:

Ֆոկուս խմբերի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ հայաստանցիների

զգալի հատվածը շատ քիչ տեղեկատվություն ունի ադրբեջանցիների և Ադրբեջանի մասին: Հարցվածները հայտնել են, որ ադրբեջանցիները, Ալիևի ռեժիմի դրդմամբ, ատելություն են դրսևորում հայերի նկատմամբ: Սակայն, մեծամասամբ, հարցվածները պատրաստ են ադրբեջանցիների հետ խաղաղ գոյակցության, եթե տեսնեն, որ Բաքուն իսկապես հակված է գնալ խաղաղության ճանապարհով: Միևնույն ժամանակ, հետազոտությունը ցույց է տալիս, որ մարդիկ ընտելացել են մոնոէթնիկ և մասամբ փակ սահմաններ ունեցող պետությունում ապրելուն: Շատերը նույնիսկ գտնում են, որ այդ հանգամանքը մեծապես նպաստել է ներքին անվտանգ միջավայր ունենալուն: Այս իրողությունը ապագայում էլ կարող է որոշակիորեն սնել պրոտեկցիոնիստական դիսկուրսները:

Հետազոտության հետաքրքրական արդյունքներից մեկն է, որ չնայած նրան, որ հարցվածները հայ-ադրբեջանական կոնֆլիկտի հիմնական պատասխանատուն համարում են Ադրբեջանը, սակայն նրանց զգալի հատվածը կոնֆլիկտի թեժացման համար մասնակի պատասխանատու է համարում նաև հայ հասարակությանն՝ իր երբեմնի մաքսիմալիստական մոտեցումների համար: Սա ցույց է տալիս, որ հայ հասարակության առնվազն որոշակի շերտերում առկա է սեփական մոտեցումների վերանայման, ինքնաքննադատման, ինքնակատարելագործման մշակույթը:

Կարող ենք եզրակացնել, որ հարցվածների զգալի մասը համարում է, որ շարքային ադրբեջանցիները, ինչպես և հայերը, նույնպես պատերազմ չեն ցանկանում: Ֆոկուս խմբերի մասնակիցները կարծում են, որ շարքային ադբեջանցիները շարունակաբար մանիպուլացվել են Ալիևի ռեժիմի կողմից և հիմնականում այդ պատճառով ռազմատենչ վարք են դրսևորել, սակայն, ըստ հարցվածներից շատերի, նրանք նույնպես այդ ռեժիմի զոհերն են: Այսինքն, հարցվածներից շատերն են տարբերություն տեսնում ավտորիտար ռեժիմի և հասարակության միջև և փորձում են չտարածել ռեժիմի վերաբերյալ սեփական գնահատականն ու էմոցիաները ողջ հասարակության վրա:

Հարցվածների մեծ մասը համոզվածություն ուներ, որ հայերի նկատմամբ հատկապես Ադրբեջանը, Թուրքիան և Ռուսաստանն անարդար են վարվել և, որ իրենք զոհի կարգավիճակում են:

Շատերի համար երկրի տնտեսական զարգացումը, որն ըստ նրանց շատ կարևոր է բարեկեցիկ և անվտանգ կյանք ունենալու համար, նույնպես կապված է կոնֆլիկտի լուծման հետ: Այսինքն կա ակնկալիք, որ շատերի կարծիքով առայժմ թերևս անհասանելի խաղաղության հաստատումը կարող էր նպաստավոր պայմաններ ստեղծել տնտեսական զարգացման համար, ինչն էլ իր հերթին կնպաստեր բարեկեցիկ կյանք ունենալուն:

Ֆոկուս խմբերի մասնակիցների մեծ մասն ունի համեստ նյութական պահանջներ բարեկեցիկ կյանքի զգացողություն ունենալու համար: Ըստ շատերի՝ հիմնական բանը, որ խոչընդոտում է բարեկեցությանը,

ստաբիլության և սահմանների անվտանգության բացակայությունն է: Ըստ էության, չնայած նյութական ոչ բարենպաստ իրավիճակին և կոնֆլիկտի առկայությանը, շատերը համեմատաբար բավարարված են իրենց կյանքով: Կարող ենք ենթադրել, որ այս զգացողությունը ավելի կխորանա հայ-ադրբեջանական կոնֆլիկտի լուծմանը և տնտեսական զարգացմանը զուգընթաց:

Հետազոտությունից կարող ենք հետևություն անել, որ հայ հասարակության անդամներից շատերը, բացի այլ պահանջներից, նաև հոգեբանական աջակցության կարիք ունեն: Հարցվածների մեծ մասի դիտարկումների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ 2020թ.-ից սկսված ռազմական կոնֆլիկտի թեժացման արդյունքում առաջացած տագնապի, սթրեսի, անպաշտպանության, անարդարության զգացողությունը դարձել է շատերի կյանքի անբաժանելի մասը:

Հիմնարար պահանջմունքների բավարարման տեսանկյունից հարցվածների զգալի հատվածի համար շատ կարևոր է, որ Հայաստանը արևմտյան հզոր դաշնակիցներ ունենա: Մարդկանց ակնկալիքն այն է, որ վերջիններս կարող են մեծապես նպաստել պետության հզորացմանը և Ադրբեջանի ագրեսիվ քայլերի զսպմանը: Կարող ենք ենթադրել, որ Հայաստանի և Արևմուտքը ներկայացնող տարբեր ազդեցիկ պետությունների հետ հարաբերությունների սերտացումը կարող է նպաստել այն բանին, որ մարդկանց մոտ կձևավորվի համոզմունք, որ Հայաստանը մեկուսացված չէ և առնվազն մասամբ հաղթահարել է էքզիստենցիալ ճգնաժամը:

Հարցվածների մի մասի պատկերացումները որոշ հարցերի վերաբերյալ հաճախ արտացոլել են ծայրահեղ աջ պոպուլիստական շրջանակների, մասնավորպես ռուսական հակադեմոկրատական քարոզչության թեզերն՝ այն դեպքում, երբ գրեթե բոլորը ցուցաբերել են խիստ բացասական վերաբերմունք կրեմլյան քարոզչության նկատմամբ: Սույն հետազոտության հիման վրա կարելի է եզրակացնել, որ մարդիկ ժողովրդավարության, անվտանգության, դրանց միջև կապի, միջազգային հարաբերությունների էության, կոնֆլիկտոլոգիայի վերաբերյալ խորքային գիտելիքներ ստանալու կարիք ունեն: Բոլոր այս հարցերի վերաբերյալ նանց պատկերացումները շատ հաճախ մակերեսային էին, ոչ խորքային, ինչն իր հերթին հանգեցնում է նրան, որ չեն կարող պատկերացնել իրենց դերը համընդհանուր բարիքի, խաղաղության ձևավորման գործում և գտնում են, որ խնդիրների լուծումը գտնվում է երկրից դուրս:

Հետազոտությունը բացահայտում է, որ հարցվածները կարևորում են ազատությունը: Ֆոկուս խմբերի մասնակիցների զգալի հատվածը գոհությամբ հաստատել է, որ մեծամասամբ իրեն ազատ է զգում Հայաստանում: Սակայն, հետազոտությունից կարող ենք եզրակացնել, որ շատերն, օրինակ, լավ չեն պատկերացնում, թե ինչպե՞ս կարելի է օգտվել այդ ազատությունից: Ոչ ոք չի նշել, որ խաղաղության օրակարգը ամրապնդելու, զարգացնելու

ուղղությամբ կարելի է սեփական նախաձեռնություններով հանդես գալ կամ, որ այլ քաղաքացիներից կարելի է ակնկալել նման բան: Բացի այդ, ոմանք խնդիր են տեսել ազատության մեջ, համարելով, որ ապատեղեկատվությունը, ատելության խոսքը, վիրավորող խոսքը, ամենաթողությունը, այն ամենն ինչ չափազանց անհագստացնում է մարդկանց՝ ազատության, ժողովրդավարության դրսևորումներ են: Նման մտածելակերպի արդյունքում շատերի մոտ առկա է նեգատիվ վերաբերմունք ազատության, ժողովրդավարության վերաբերյալ:

Առաջարկություններ

ՀՀ կառավարությանը, ՀՀ քաղաքացիական հասարակությանը, միջազգային կառույցներին առաջարկվում է.

- Ավելի ինտենսիվ աշխատանք տանել բնակչության հետ՝ խաղաղության կոնցեպտն իր բոլոր բաղադրիչներով ներկայացնելու, հանրամատչելի լեզվով դրա բոլոր առավելությունները ներկայացնելու ուղղությամբ:

- Մշակել և հեռարձակել հանրային հեռուստաընկերությամբ դեմոկրատիային և կոնֆլիկտների լուծմանը վերաբերող հեռուստահաղորդումներ:

- Մշակել և իրականացնել մեծահասակներին ուղղված քաղաքացիական, քաղաքական կրթության դասընթացների լայնամասշտաբ ծրագրեր: Բացի այդ, հորիզոնական կապերի ստեղծմանը, սեփական ուժերով որոշակի ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ հմտությունների ձևավորմանը նպաստող ծրագրերը նույնպես կարող են մեծ ազդեցություն ունենալ հասարակության մոտ ժողովրդավարական մշակույթի ամրապնդման վրա: Կարծում ենք, որ նման ծրագիրը լավագույնս կարող է կազմակերպվել քաղաքացիական հասարակության, եվրոպական ժողովրդավարական համայնքի, ՀՀ կառավարության միջև համագործակցության միջոցով:

- Մշակել և իրականացնել բազմամշակութայնությունը, հանդուրժողականությունը խթանող կրթական և մշակութային ծրագրեր:

- Խաղաղության պայմանագիր կազմելիս հաշվի առնել, որ խաղաղության պայմանագիրը պետք է լինի այնպիսին, որը թույլ կտա մարդկանց համոզվել, որ իրենց ազգային ինքնությունը հարգվում է, այլապես մարդկանց մոտ կգերիշխի այն զգացումը, որ կոնֆլիկտն ավարտված չէ, շարունակվում է, իսկ ազգային ինքնությանն սպառնացող վտանգները չեզոքացված չեն:

- Ցույց տալ մարդկանց, թե ինչպիսի՞ օգուտներ հասարակության կոնկրետ շերտերն ուղղակիորեն կքաղեն խաղաղության պայմանագրից, խաղաղության հաստատումից, թե ինչպե՞ս կարող է խաղաղության հաստատումն ազդել մարդկանց բարեկեցության վրա: